



Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

2007 թվականին «Փոքր և Միջին Բիզնեսի Հիմնադրամի» կողմից իրականացրած գործունեության վերաբերյալ

Իր առաքելության շրջանակներում Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է ծրագրեր շահառուների համախմբման, շահերի պաշտպանության և իրազեկման ուղղությամբ:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեության համար բարենպաստ և քաղաքակիրթ միջավայրի ձևավորման նպատակով «Փոքր և Միջին Բիզնեսի Հիմնադրամը» (ՓՄԲՀ) 2007 թ.-ին սերտորեն համագործակցել է երկրի օրենսդիր և գործադիր պետական կառույցների, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների հետ: Համագործակցության շրջանակներում Հիմնադրամի նախաձեռնությամբ ձևավորված Բիզնես շահերի պաշտպանության ոչ ֆորմալ ցանցի ակտիվ գործունեության արդյունքում Շիրակի մարզի Արթիկ քաղաքի համայնքային բյուջեում երկարաժամկետ և տարեկան խնդիրների շարքում ներառվել է «Աջակցել համայնքում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը՝ կազմակերպելով սեմինարներ և ֆորումներ» տողը:

ՓՄԲՀ-ն շարունակել է աջակցել Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, օգնելով ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչներին կիսելու իրենց գիտելիքներն ու փորձը, խրախուսելով նրանց զարգացնելու փոխշահավետ համագործակցություն և ամուր գործընկերային հարաբերություններ հանուն իրենց իրավունքների և շահերի պաշտպանության:

Հաշվետու տարում կազմակերպությունը շարունակել է իր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով.

- ՀՀ համայնքների գործարար ներուժի, գործարար միջավայրի, գործող ենթակառույցների աշխատանքի, գործարարության զարգացման ինստիտուցիոնալ խոչընդոտների փորձագիտական գնահատում:
- ԱՀՌԾ ծրագրի վերանայման մասնակցային գործընթացի շրջանակներում գործարար և ներդրումային միջավայրի զարգացմանն ուղղված առաջարկությունների մշակում:
- «Հայաստանի երիտասարդ իրվաբանների ասոցիացիայի» հետ համատեղ ՓՄՁ ոլորտում վեճերի արտադատարանային լուծման նպատակով Միջնորդ Դատարանի հիմնադրում:
- «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ընդդեմ կոռուպցիայի. Երևույթի ընկալումն ու հնարավոր լուծումները» գրքուիկի հրատարակում:
- Տարբեր սոցիալական խմբերի ինքնազբաղվածության համար պայմանների ապահովմանն ու աղքատության կրճատմանն ուղղված միջոցառումների և ծրագրերի մշակում և իրականացում:
- Երկրի քաղաքական հասարակական կյանքում գործարար համայնքի ակտիվ ներգրավմանն ուղղված նախաձեռնությունների մշակում և իրականացում:
- Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների զարգացմանն ուղղված բարձրորակ մասնագիտական խորհրդատվության, տեխնիկական և տեղեկատվական օժանդակության մատուցում:

Իր ամենօրյա գործունեության շրջանակներում Հիմնադրամը երկրի մարզերում կազմակերպել է հանդիպումներ և քննարկումներ տեղի գործարար համայնքի ներկայացուցիչների հետ ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծմանն ուղղված անհրաժեշտ համատեղ գործողությունների շուրջ, օժանդակել է փոքր և միջին բազմաթիվ ձեռնարկատերերի՝ նրանց ցուցաբերելով անհրաժեշտ խորհրդատվական, տեղեկատվական եվ ուսուցողական բնույթի աջակցություն: Տարբեր կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր բազմիցս դիմել են ՓՄԲՀ-ին հարկային և մաքսային օրենքների վերաբերյալ խորհրդատվության, ձեռնարկության գրանցման մեխանիզմների և բիզնես պլանների մշակման, վարկավորման աղբյուրների, սխեմաների և վարկավորող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության, տեխնիկական օժանդակության /փաստաթղթերի պատրաստման, թարգմանությունների և պատճենահանման ծառայությունների/ խնդիրներով, որոնց մատուցվել են պատշաճ մակարդակի համապատասխան ծառայություններ:

Հաշվետու տարում ՓՄԲՀ-ի գործունեության համար ֆինանսական աղբյուր են հանդիսացել.

- մատուցված ծառայությունների դիմաց ստացած եկամուտները,
- հիմնադիրների ներդրումներն ու նվիրատվությունները,
- միջազգային դոնոր կազմակերպությունների դրամաշնորհները:

Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը կազմել է.

34 228 889 դրամ

Դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը կազմել է.

33 704 814 դրամ

Հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձինք հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամի միջոցներից և ծառայություններից չեն օգտվել: